— Այդ սանդալները յիշեցնում են այն կաշուց կազմած հայկական նաւակները, որ նկարագրում է Հերոդոտոսը իր պատմութեան մէջ, եւ որ գործ էին ածում հայերը մի քանի հազար տարի առաջ:

Հերոդոտոսի նկարագրած նաւակները, ինչպէս ասաց Ասլանը, բոլորակ ձեւ ունէին եւ զամբիւղի նման ամբողջապէս հիւսած էին ուռենիի ճիւղերից: Ներսից այդ նաւակները պատած էին մորթիներով, եւ ջուրը դժուարութեամբ կարող էր անցնել նրանց մէջ: Նրանք այնքան թեթեւ էին եւ ընդարձակ, որ կարող էին տանել բաւական ծանրութիւններ: Հայոց վաճառականները տեղաւորում էին նրանց մէջ իրանց վաճառքները, նստում էին եւ վեր էին առնում իրանց հետ մի քանի աւանակներ կամ ջորիներ: Եփրատ գետի ընթացքով լողում էին նրանք մինչեւ Բաբելոն: Հասնելով այնտեղ, վաճառում էին տարած մթերքը, յետոյ նաւակները քանդում էին, մորթիներն էին միայն վեր առնում, իսկ բոլոր հիւսուածքը մի կողմ էին ձգում: Երբ պատրաստւում էին վերադառնալ դէպի Հայաստան, մորթիները բեռնում էին ջորիների վրայ եւ ցամաքով ճանապարհ էին ընկնում: Ամէն տեղ նրանք կարող էին պատրաստել նոյնտեսակ նաւակներ, որովհետեւ գլխաւոր նիւթը, մորթիները, իրանց հետ ունէին, իսկ ուռենի ճիւղեր բոլոր գետերի եզերքի մօտ կարելի էր գտնել:

— Ինչո՞ւ էք հեռու գնում մինչեւ Հերոդոտոսի ժամանակները, — մէջ մտաւ Բերզէն-օղլին, — այս տեսակ նաւակներ գործ են ածում մինչեւ այսօր հայերը Եփրատի եւ Տիգրիսի ջրերի վրայ, այն զանազանութեամբ միայն, որ մորթիների փոխարէն իրանց զամբիւղաձեւ նաւակները պատում են կաշիով, որովհետեւ հիմա սովորել են կաշու պատրաստութիւնը:

Նաւահանգստում կային մի քանի նաւակներ եւս նոր ձեւով, որոնց մէջ իր գեղեցկութեամբ եւ յարմարութեամբ առաջին տեղը բռնում էր Բերզէն-օղլու նաւակը: Նա ցոյց տուեց իր նաւակը, ասելով.

— Այդ այն արհեստաւորի գործն է, որ այժմ բանում է իմ տանը: Նա ընդունակ է մինչեւ անգամ թեթեւ առագաստաւոր նաւեր կառուցանելու: Այդ արհեստով նա երկար ժամանակ աշխատել է Կ. Պոլսի նաւահանգիստներում: Սաստիկ դիւրաշարժ է այդ նաւակը. նրան կարելի է կառավարել ինչպէս մի լաւ վարժուած նժոյգ ձի:

Բերզէն-օղլին մնաց նաւահանգստում, իսկ մենք վերադարձանք գիւղը: Ասլանը վարպետ Փանոսի հետ գնացին մի քանի հիւանդներ տեսնելու (գոնէ այդպէս ասացին ինձ), բայց ես գնացի մեր հիւրընկալի տունը: